

Այս դասի (մոտիվացնող ներածական տեսանյութ+ դասի տեքստ+ բառարան+ինքնաստուգիչ հարցեր) յուրացման համար հարկավոր է մինչև **4 ժամ**:

ԴԱՍ 2

«ՓԱԽՍԱԿԱՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓԱԽՍԱԿԱՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ: ՀԵՏԱՊՆԴՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐ ԵՐԿՅՈՒՂ: ԽՄԲԻ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐ

[ՄՈՏԻՎԱՅՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ](#)

(հասանելի է Արդարադատության ակադեմիայի կայքի հեռուստուցման բաժնում և հեռուստուցման փաթեթի կրիչում)

Նախորդ դասի շրջանակներում անդրադարձանք՝

- փախստականների միջազգային իրավունքի պատմությանը և փախստականների պաշտպանության համար պատասխանատու միջազգային կառույցների գործունեությանը:

Այս դասի շրջանակներում Ձեզ կներկայացվի՝

- **փախստական** հասկացությունը 1951 թ. «Փախստականների կարգավիճակի մասին» կոնվենցիայի և «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի շրջանակներում:

Ցուցումներ



Մինչև 5 րոպե

Ուշադրությամբ կարդացեք տեքստը (օգտվելով բառարանից) և այն յուրացնելուց հետո միայն անցեք ինքնաստուգիչ հարցերին:



Մինչև 200 րոպե

Նշված հասկացության բովանդակությունն առավել լիարժեքորեն վերհանելու նպատակով կքննարկենք փախստականի կարգավիճակի տրամադրման հիմքերի հարցը (այդ հիմքերի մի մասը կքննարկենք երրորդ դասի շրջանակներում):

1951 թ. Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիան սահմանում է փախստականի կարգավիճակի տրամադրման համար անհրաժեշտ պայմանները («ներառման պայմաններ»), ինչպես նաև կարգավիճակի տրամադրումը բացառող պայմանները («բացառման պայմաններ»): Ներառման պայմանները սահմանված են կոնվենցիայի 1-ին հոդվածի (Ա) մասում:

«Ա. Սույն Կոնվենցիայի նպատակների համար «փախստական» հասկացությունը կիրառվում է ցանկացած անձի նկատմամբ, ով (1) փախստական է համարվել ըստ 1926 թ. մայիսի 12-ի և 1928 թ. հունիսի 30-ի համաձայնագրերի կամ ըստ 1933 թ. հոկտեմբերի 28-ի և 1938 թ. փետրվարի 10-ի կոնվենցիաների, 1939 թ. սեպտեմբերի 14-ի արձանագրության կամ Փախստականների հարցերով միջազգային կազմակերպության կանոնադրության: Փախստական համարվելու իրավունքը մերժելու մասին Փախստականների հարցերով միջազգային կազմակերպության կողմից իր գործունեության ընթացքում կայացրած որոշումները չեն խոչընդոտում այն անձանց փախստականի կարգավիճակ տրամադրելուն, ովքեր բավարարում են այս բաժնի 2-րդ կետի պայմանները, (2) մինչև 1951 թ. հունվարի 1-ը տեղի ունեցած իրադարձությունների և ռասայի, կրոնի, քաղաքացիության, որոշակի սոցիալական խմբի կամ քաղաքական կարծիքի հարելու պատճառով հետապնդվելու հիմնավոր երկյուղի հետևանքով գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս և անկարող է կամ, նման երկյուղի պատճառով, չի ցանկանում օգտվել այդ երկրի պաշտպանությունից, կամ նա, ով, չունենալով քաղաքացիություն և նման իրադարձությունների հետևանքով գտնվելով իր նախկին մշտական բնակության երկրից դուրս, անկարող է կամ, նման երկյուղի պատճառով, չի ցանկանում վերադառնալ այնտեղ»:

Հատուկ ուշադրությամբ կարդացեք Կոնվենցիայի հետևյալ հատվածը:

Հարկ է նշել, որ կոնվենցիայի պաշտոնական թարգմանությունը պարունակում է որոշակի թերություններ (օրինակ “nationality” բառը սխալմամբ թարգմանված է որպես

«քաղաքացիություն», մինչդեռ կոնվենցիայում այն օգտագործված է «ազգություն» իմաստով), որոնք, սակայն, շտկված են «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում: Ուստի, տերմինաբանության առումով առավել նպատակահարմար է առաջնորդվել նշված օրենքով:

Կոնվենցիայի նշված դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ անձին փախստականի կարգավիճակ տրամադրելու համար ներառման կումուլյատիվ պայմաններ են՝

- հետապնդումների հիմնավոր երկյուղը,
- նշված երկյուղի՝ որոշակի ռասային, կրոնին, ազգությանը, սոցիալական խմբի պատկանելությամբ կամ, որպես այլընտրանք, քաղաքական հայացքներով պայմանավորված լինելը,
- երկյուղի պատճառով սեփական քաղաքացիության կամ, ապատրիդների դեպքում, մշտական բնակության երկրից դուրս գտնվելու փաստը,
- քաղաքացիության կամ բնակության երկիր վերադառնալու անկարողությունը կամ, որպես այլընտրանք, երկյուղի պատճառով վերադառնալ չցանկանալը:

Այժմ կանդիդատներն այս պայմանների մանրամասն քննարկմանը: Դրանց մեկնաբանման համար մեծ նշանակություն ունեն ՄԱԿ ՓԳՀ, ինչպես նաև Մարդու իրավունքների կոմիտեի ու Ռասայական խտրականության վերացման կոմիտեի պաշտոնական մեկնաբանություններն ու որոշումները (վերջին երկուսի դեպքում դա պայմանավորված է նրանով, որ կոնվենցիայում օգտագործված որոշակի

Եզրույթներ բացահայտված են «Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում ու «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայում): Ինչպես նշել է ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանը՝ նման կառույցների կողմից համապատասխան միջազգային պայմանագրերի մեկնաբանություններն ունեն մեծ կշիռ, ինչը մասնավորապես բխում է միջազգային իրավունքի որոշակիության և միատեսակ կիրառման ապահովման անհրաժեշտությունից¹:

Ներառման պայմաններից առավել կարևոր նշանակություն ունի «հետապնդումների հիմնավոր երկյուղ» պայմանը: Այն բաղկացած է սուբյեկտիվ («երկյուղ») և օբյեկտիվ («հիմնավորված» և «հետապնդումներ») տարրերից, որոնք պետք է դիտարկվեն իրենց համակցության մեջ:

Մտածեք օրինակ, որտեղ առանձնացված լինեն «հետապնդումների հիմնավոր երկյուղ»-ի օբյեկտիվ և սուբյեկտիվ տարրերը:

Այս եզրույթի մեջ առաջնային նշանակություն ունի հենց սուբյեկտիվ տարրը՝ անձի մոտ երկյուղի զգացումը: Որպես կանոն, անհրաժեշտ է ստուգել երկյուղի զգացման մասին անձի պնդումների արժանահավատությունը: Այդ նպատակով պետք է գնահատվեն բոլոր այն սուբյեկտիվ ու օբյեկտիվ հանգամանքները, որոնք կարող են հաստատել, որ անձի կողմից փախստականի կարգավիճակի համար դիմելու հիմնական պատճառ է հենց երկյուղը (բացառությամբ եթե երկյուղի առկայությունն ու հիմնավորվածությունը առերևույթ են գործի փաստերից):² Ընդ որում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկյուղն ինքնին սուբյեկտիվ տարր է, դրա առկայության գնահատումը պետք է իրականացվի հայցողի

¹ Ahmadou Sadio Diallo (Republic of Guinea v. Democratic Republic of the Congo), Merits, Judgment, I.C.J. Reports 2010, p. 639, § 66.

² UNHCR Handbook and Guidelines On Procedures and Criteria for Determining Refugee Status under the 1951 Convention and the 1967 Protocol Relating to the Status of Refugees, Reissued Geneva, December 2011.

դիտակետից, այլ ոչ թե, օրինակ, ելնելով նրա ծագման երկրում տիրող իրավիճակի վերաբերյալ դատողություններից: Հարկ է նաև հաշվի առնել, որ երկյուղից բացի երկրորդական այլ դրդապատճառների առկայությունը (օրինակ՝ տնտեսական նկատառումները) հիմք չէ դիմումը մերժելու համար:

Անդրադառնալով երկյուղի հիմնավորվածությանը՝ ամենից առաջ հարկ է նշել, որ նույնիսկ չափազանցված երկյուղը կարող է հիմնավոր լինել, քանի դեռ փաստական հանգամանքների համատեքստում նման սուբյեկտիվ ընկալումը կարող է համարվել ողջամիտ:

Միաժամանակ, հիմնավորվածության գնահատումը հանգում է հետևյալ հարցին՝ արդյո՞ք երկյուղը հիմնված է օբյեկտիվ հանգամանքների վրա: Այսպես, եթե անձն արդեն իսկ ենթարկվել է հետապնդումների, ապա նրա երկյուղի հիմնավորվածությունը, որպես կանոն, ենթադրվում է: Անձի երկյուղը կարող է հիմնավոր լինել նաև այն դեպքում, եթե հիմնված է այլոց նկատմամբ տեղի ունեցած հետապնդումների վրա (եթե նրանք պատկանում են միևնույն խմբին կամ ունեն միատեսակ քաղաքական հայացքներ և, հատկապես, եթե նրանք տվյալ անձի ազգականը կամ բարեկամն են): Այս առումով կարող է մեծ նշանակություն ունենալ համապատասխան երկրում առկա ընդհանուր իրավիճակը:

Ինչպես նշել է ԱՄՆ գերագույն դատարանը՝ երկյուղի «հիմնավոր» լինելու պահանջը չի նվազեցնում անձի սուբյեկտիվ ընկալման կարևորությունը և չի ենթադրում հետապնդման բարձր հավանականության պայման, քանի որ հետապնդման նույնիսկ 10 տոկոս հավանականությունն ակնհայտորեն հիմնավորում է անձի երկյուղը³:

Փորձեք այս համատեքստի համար որոշակիացնել «ողջամիտ» ասվածը:

³ INS v. Cardoza – Fonseca, 480 US 421 (1987).

Անդրադառնալով «հետապնդում» եզրույթին՝ առաջին հերթին հարկ է հաշվի առնել, որ միջազգային իրավունքում այն չունի հստակ սահմանում: Կոնվենցիայի 33-րդ հոդվածի համատեքստից կարելի է եզրակացնել, որ կյանքին կամ ազատությանը սպառնացող վտանգը բոլոր դեպքերում պետք է որակվի որպես հետապնդում: Մարդու իրավունքների այլ լուրջ խախտումները նույնպես կարող են որակվել որպես հետապնդում: Մյուս կողմից, սուկ տնտեսական բնույթի ներգործությունները կհամարվեն հետապնդում, եթե դրանք վտանգեն անձի կյանքը կամ ազատությունը՝ նրան առաջին անհրաժեշտության պարագաներից զրկելու կամ ծանր նյութական դրության մեջ դնելու միջոցով:⁴

Փորձեք ինքնուրույն սահմանել հետապնդում հասկացությունը:

Միաժամանակ, հետապնդման մակարդակի չհասնող առանձին պրակտիկաները, ներազդեցությունները կամ սպառնալիքներն իրենց համադրությամբ կարող են առաջացնել ապագա հետապնդման երկյուղ:

Առանձին խնդիր է անձի քրեական հետապնդման հարցը: Այդպիսի հետապնդումը, մի կողմից, ինքն իրենով չի կարող համարվել հետապնդում կոնվենցիայի իմաստով: [Ավելին, լուրջ հանցագործություններ գործելը «բացառման պայման» է, և հիմք է փախստականի կարգավիճակի մերժման համար:](#) Սակայն, մյուս կողմից, անձը երբեմն կարող է քրեական հետապնդման ենթարկվել սուկ իր քաղաքական հայացքների կամ գործունեության համար (օրինակ՝ քաղաքական հայացքների հրապարակային արտահայտում, քաղաքական բովանդակությամբ թռուցիկների տարածում) կամ իր կրոնով նախատեսված ծեսերի կատարման համար, եթե դրանք «սովորական» հանցագործությունների տարրեր չեն պարունակում: Նման դեպքերում քրեական հետապնդումը

Այս մասին առավել մանրամասն կկարդաք դաս 4-ում:

⁴ Mirisawo v. Holder, 599 F.3d 391, 392 (4th Cir. 2010)

կամ դրա վտանգը պետք է համարվի հետապնդում կոնվենցիայի իմաստով: Որոշ դեպքերում անձին կարող է խիստ քրեական պատիժ սպառնալ նաև իր երկիրը լքելու համար: Նման դեպքերում քրեական հետապնդումը նույնպես կարող է որակվել հետապնդում կոնվենցիայի իմաստով, եթե այն կապված է անձի՝ որոշակի ռասային, կրոնին, ազգությանը, սոցիալական խմբին պատկանելության կամ քաղաքական հայացքների հետ:

Վերջապես, հարկ է հաշվի առնել, որ հետապնդումը, որպես կանոն, իրականացվում է անձի քաղաքացիության/ ծագման երկրի իշխանությունների կողմից: Մասնավոր անձանց կողմից հետապնդումը փախստականի կարգավիճակի շնորհման հիմք է, եթե իշխանությունները գիտակցաբար հանդուրժում են այդ հետապնդումը, հրաժարվում կամ անկարող են ապահովել ողջամտորեն արդյունավետ պաշտպանություն դրանից:

Կարևոր է հասկանալ, որ փախստականի կարգավիճակ հայցող անձը կարող է իր երկրուղը կամ հետապնդումները նկարագրելիս չօգտագործել «երկրուղ» կամ «հետապնդում» եզրերը: Ուստի փախստականի դիմումը քննարկող վարչական մարմինը կամ գործը քննող դատարանը պետք է պարզեն՝ արդյո՞ք անձի կողմից նկարագրվող հանգամանքներն ու զգացումները ենթադրում են «հետապնդումների հիմնավոր երկրուղ»:

Այժմ հարկ է անդրադառնալ «որոշակի ռասային, կրոնին, ազգությանը, սոցիալական խմբին պատկանելություն» և «քաղաքական հայացքներ» եզրույթներին:

Ժամանակից գիտությունում չկա կոնսենսուս **ռասա** և

Փորձեք մտածել, թե «երկրուղ» և «հետապնդում» բառերի ինչ հոմանիշներ կարող է օգտագործել փախստականի կարգավիճակ հայցող անձը:

ազգություն եզրույթների տարանջատման հարցում: Ընդունված է այս եզրույթները դիտարկել միասնության մեջ: Ընդ որում, համաձայն Ռասայական խտրականության վերացման կոմիտեի մեկնաբանությունների, ռասայական կամ ազգային խմբին անձի պատկանելությունն առաջին հերթին որոշվում է ելնելով համապատասխան անձի կողմից իրեն տվյալ խմբի հետ նույնականացումից⁵:

Ինչ վերաբերում է կրոնական պատկանելությանը, ապա, համաձայն Մարդու իրավունքների կոմիտեի պաշտոնական մեկնաբանությունների, *կրոն* եզրույթին տրվում է առավել լայն մեկնաբանություն, և այն ներառում է թեիստական ու ոչ թեիստական հավատքները, աթեիզմը, ինչպես նաև որևէ հավատք չունենալու դիրքորոշումը⁶: Երբեմն հետապնդումը կարող է պայմանավորված լինել ոչ թե սոսկ կրոնական պատկանելությամբ, այլ կրոնը առանձին արարողությունների, ծեսերի, քարոզչության կամ այլ միջոցով արտահայտելով: Այսպես, 1984 թ. Պակիստանում քրեականացվեց մահմեդականության ահմադիյա հոսանքի ներկայացուցիչների կողմից հոգեորսությունը: Ընդ որում, ըստ իրենց հավատքի, այս հոսանքի ներկայացուցիչներն ունեն հոգևորություն իրականացնելու պարտականություն: Քննարկելով ահմադիյաների հարցը՝ անգլիայի դատարանները եզրակացրեցին, որ այն ահմադիյաները, ովքեր իրենց հոգևոր պարտքն են համարում հոգեորսությունը, պետք է համարվեն Պակիստանում կրոնական պատկանելության հիմքով հետապնդվողներ⁷:

⁵ Committee on the Elimination of Racial Discrimination, General Recommendation 8, Membership of racial or ethnic groups based on self-identification (Thirty-eighth session, 1990), U.N. Doc. A/45/18 at 79 (1991).

⁶ Human Rights Committee, General Comment 22, Article 18 (Forty-eighth session, 1993). Compilation of General Comments and General Recommendations Adopted by Human Rights Treaty Bodies, U.N. Doc. HRI/GEN/1/Rev.1 at 35 (1994).

⁷ R. v Secretary of State for the Home Department Ex p. Ahmad (Gulzar) (CA) Court of Appeal c.1990, Imm. A.R. 61.

Առավել խնդրահարույց է *սոցիալական խումբ* եզրույթի սահմանումը: Դրա սահմանման հարցում, ընդհանուր առմամբ, գոյություն ունի երկու մոտեցում՝ *eiusdem generis* կամ պաշտպանվող բնութագրերի մոտեցումը և հասարակական ընկալման մոտեցումը:

Առաջին մոտեցման շրջանակներում սոցիալական են համարվում խմբերը, որոնք ունեն ընդհանուր և կայուն հատկանիշներ, որոնք բնածին են կամ, այլապես, փոփոխման ոչ ենթակա: Այդպիսի հատկանիշներ են համարվում, օրինակ, սեռը, սեռական կողմնորոշումը, պատկանելությունը որոշակի տոհմի կամ ընտանիքի: Երբեմն անձի որոշակի արարք կամ նրա հետ պատահած դեպք նրան կարող են դարձնել որոշակի խմբի անդամ: Այսպես, որոշ «ավանդական» հասարակություններում բռնաբարության զոհերը առանձին խումբ են, որի նկատմամբ առկա է բացասական վերաբերմունք: ԱՄՆ դատարանները սոցիալական խումբ են ճանաչել արևմտյան արժեքների կրող երիտասարդներին, ովքեր ավանդապաշտ մահմեդական հասարակություններում ամուսնացել են առանց ծնողների համաձայնության, ինչպես նաև քրիստոնյա և իրավապաշտպան կանանց, ովքեր Իրանում հրաժարվում են ենթարկվել հագուստի նկատմամբ օրենսդրության պահանջներին⁸: Երկու դեպքում էլ համապատասխան անձինք չեն համաձայնում հրաժարվել որոշակի արժեքներից, որոնք առանցքային են իրենց արժանապատվության կամ համոզմունքների համար, ինչն էլ նրանց առանձնացնող՝ փոփոխման ոչ ենթակա հատկանիշ է:

Ըստ հասարակական ընկալման մոտեցման՝ սոցիալական խմբի առկայությունը կարելի է փաստել այն ժամանակ, երբ այն հասարակության կողմից ընկալվում է

⁸ Al-Ghorbani v. Holder, 585 F.3d 980 (6th Cir. 2009)

որպես առանձին խումբ: Որպես կանոն, դա ենթադրում է բնածին կամ, այլապես, փոփոխման ոչ ենթակա հատկանիշների առկայություն, սակայն, տեսականորեն, հասարակությունը կարող է որպես սոցիալական խումբ ընկալել ցանկացած այլ ընդհանուր հատկանիշներ ունեցող անձանց ամբողջություն: Հետապնդումը որոշակի ընդհանրություններ ունեցող անձանց կարող է վերածել սոցիալական խմբի, եթե պայմանավորված է այդ ընդհանրություններով, և հասարակությունը դրանց հիման վրա այդ անձանց նույնականացնում է որպես խումբ: Այն, որ Պակիստանում ամուսնական անհավատարմության մեջ կասկածվող կանայք ենթակա են լուրջ հետապնդումների, անգլիական դատարանների կողմից հիմք է ընդունվել վերոգրյալ մոտեցման համաձայն նրանց որպես առանձին սոցիալական խումբ որակելու համար⁹:



Ինչ վերաբերում է անձանց քաղաքական հայացքներին, ապա հարկ է հաշվի առնել, որ դրանք կարող են արտահայտվել քաղաքական գործընթացներից դուրս, օրինակ՝ անձի կողմից քաղաքական իշխանության կամ երկրում առկա արատավոր երևույթների (օրինակ՝ կաշառակերության) ընդհանուր քննադատությամբ կամ անձի ակտիվ հասարակական դիրքորոշմամբ:

Գործնականում հիմնավոր երկյուղի պատճառ հանդիսացող հետապնդումը հաճախ պայմանավորված է լինում վերը նշված պատկանելություններից կամ համոզմունքներից ոչ թե մեկով, այլ միաժամանակ մի քանիսով: Օրինակ՝ ազգային փոքրամասնություն ներկայացնող քաղաքական ուժի անդամը կարող է



⁹ R. v. Immigration Appeal Tribunal ex parte Shah; Islam v. Secretary of State for the Home Department, (1999) 2 AC 629.

հետապնդվել է և՛ որպես տվյալ ազգային խմբի անդամ, և՛ որպես տվյալ քաղաքական հայացքների կրող:

Մյուս կողմից, սուկ որոշակի խմբին պատկանելը կամ որոշակի քաղաքական հայացքներ ունենալը, որպես կանոն, չեն կարող համարվել հետապնդման երկյուղի հիմնավոր պատճառ: Այսինքն՝ յուրաքանչյուր առանձին դեպքում հարկ կլինի պարզել՝ արդյո՞ք կոնկրետ անձը նման երկյուղի պատճառներ ուներ համապատասխան խմբին իր պատկանելության կամ իր քաղաքական հայացքների ուժով: Սակայն որոշ դեպքերում, երբ տվյալ խմբի հետապնդումները կրում են համատարած բնույթ, տվյալ խմբին անձի պատկանելությունը կարող է դիտվել որպես երկյուղի բավարար հիմնավորում: Ինչ վերաբերում է քաղաքական հայացքներին, ապա երկյուղի հիմք հանդիսանալու համար, որպես կանոն, անհրաժեշտ է, որ անձը դրանք հրապարակավ արտահայտի, կամ դրանք այլ կերպ հայտնի դառնան իշխանություններին: *Սակայն որոշ դեպքերում երկյուղի բավարար հիմքեր կլինեն նաև այն ժամանակ, երբ կարելի է եզրակացնել, որ անձի հայացքներն ապագայում հայտնի կդառնան իշխանություններին և կդառնան հետապնդումների պատճառ:*

Բերեք նմանատիպ դեպք-օրինակի նկարագրություն:

Ամփոփելով, կարելի է եզրակացնել, որ **հետապնդումների հիմնավոր երկյուղ** եզրույթն ունի առանցքային դեր փախստականի կարգավիճակի շնորհման հարցում: Դրա գնահատման ժամանակ կենտրոնական է երկյուղի սուբյեկտիվ զգացումը, որի արժանահավատությունը, ինչպես նաև հետապնդումների առկայությունը, պետք է գնահատվի առկա սուբյեկտիվ ու օբյեկտիվ հանգամանքների լույսի ներքո: «Ռասա», «ազգություն», «կրոն» ու «քաղաքական հայացքներ» եզրույթները, որպես կանոն, հարկ է մեկնաբանել

ԲԱՌԱՐԱՆ

Մարդու իրավունքների կոմիտե – քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին 1966թ. միջազգային դաշնագրի հիման վրա ստեղծված միջազգային կառույց, որին Կոնվենցիայով վերապահված է մասնակից պետությունների ներկայացրած ազգային զեկույցների և որևէ մասնակից պետության տարածքում դաշնագրի դրույթները խախտելու վերաբերյալ ներկայացրած հաղորդումների քննության իրավասությունը:

Ռասայական խտրականության վերացման կոմիտե – ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին 1965թ. կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով հիմնադրված միջազգային կառույց: Կոմիտեն իրավունք ունի Կոնվենցիայի մասնակից պետություններից ստանալու և քննության առնելու պարբերական զեկույցներ այդ փաստաթղթի կատարման ընթացքի մասին, կարող է քննության առնել մի մասնակից պետության հաղորդումը մյուս մասնակից պետության կողմից Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունները չկատարելու վերաբերյալ՝ պայմանով, որ պետությունը, որի վերաբերյալ ներկայացվում է հաղորդումը, ճանաչում է Կոմիտեի այդ իրավասությունը:

ՄԱԿ-ի արդարադատության միջազգային դատարան – ՄԱԿ-ի հիմնական դատական մարմինն է, որը հիմնադրվել է 1945 թ. հունիսին և սկսել է գործել



Ցուցումներ

Ուշադրությամբ ծանոթացեք տերմիններին, իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձեք դրանց:



Մինչև 15 րոպե

1946 թ. ապրիլից: Դատարանը կազմված է 15 անկախ դատավորներից: Միջազգային դատարանը ստեղծված է միջազգային վեճերը խաղաղ ճանապարհով լուծելու և օրինականությունը ապահովելու համար: Դատարանն իրավագոր է քննության առնել պետությունների միջև վեճեր, երբ առկա է վեճի կողմերի համաձայնությունն առ դատարանում վեճի քննություն: Որոշ միջազգային պայմանագրեր (օրինակ՝ «Բասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» 1965 թ. կոնվենցիան, «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» 1948 թ. կոնվենցիան) նման համաձայնություն են նախատեսում դրանցից բխող բոլոր վեճերի համար:

Ներառման պայմաններ (դրույթներ) – փախստականի կարգավիճակի տրամադրման համար անհրաժեշտ պայմաններ՝ սահմանված 1951 թ. «Փախստականների կարգավիճակի մասին» կոնվենցիայով:

Հետապնդումների հիմնավոր երկյուղ – անձին փախստականի կարգավիճակ տրամադրելու ներառման կումույատիվ պայմաններից մեկը, որը բաղկացած է սուբյեկտիվ («երկյուղ») և օբյեկտիվ («հիմնավորված» և «հետապնդումներ») տարրերից, որոնք պետք է դիտարկվեն իրենց համակցության մեջ:

Ejusdem generis – լատիներենից թարգմանվում է որպես «նույն տեսակի»: Որևէ եզրույթի սահմանման համար օգտագործվող մոտեցում, որի շրջանակներում

եզրույթով ամրագրված առարկան ընկալվում է որպես ընդհանուր և կայուն հատկանիշներ ունեցող, որոնք բնածին են կամ, այլապես, փոփոխման ոչ ենթակա: Փախստականների միջազգային իրավունքում այդպես է անվանվում սոցիալական խումբը պաշտպանվող բնութագրերի հիման վրա որոշելու մոտեցումը: Այդ մոտեցման շրջանակներում սոցիալական խումբ են համարվում այն խմբերը, որոնք ունեն ընդհանուր և կայուն հատկանիշներ, որոնք բնածին են կամ, այլապես, փոփոխման ոչ ենթակա:

Թեխստական հավատք – թեիզմն ուսմունք է, որի համաձայն Աստվածն անձնավորություն է՝ օժտված կամքով և բանականությամբ, ով ստեղծել է աշխարհը և խորհրդավոր կերպով ներգործում է տիեզերական իրադարձությունների վրա:

Ահմադիյա – մահմեդական կրոնական շարժում է, որը հիմնադրվել է Բրիտանական Հնդկաստանում XIX դարի վերջում: Ահմադի մահմեդականները հավատում են, որ իսլամը վերջնական կրոնն է մարդկության համար: Այս կրոնական ուղղվածության կարևոր բնութագրիչներից է հոգեորսությունը:

1. UNHCR Handbook and Guidelines On Procedures and Criteria for Determining Refugee Status under the 1951 Convention and the 1967 Protocol Relating to the Status of Refugees, Reissued Geneva, December 2011, §§ 33-86.
2. UNHCR, The “Ground with the Least Clarity”: A Comparative Study of Jurisprudential Developments relating to 'Membership of a Particular Social Group', August 2012, PPLA/2012/02, available at: <http://www.refworld.org/docid/4f7d94722.html> [accessed 11 June 2016].
3. Л. В. Павлова, А. В. Селиванов, Международно-правовой статус беженца, Пособие для студентов вузов, Минск: Тесей, 2006, Глава 3. Предоставление статуса беженца, электронный режим доступа: <http://evolutio.info/content/view/1286/187/> [2016-06-11 5:30:20 PM].
4. УВКБ ООН, Руководство по процедурам и критериям определения статуса беженцев, Женева, 1992.
5. R v. Immigration Officer at Prague Airport and Another, Ex parte European Roma Rights Centre and Others, [2004] UKHL 55, 9 December 2004.
6. INS v. Cardoza – Fonseca, 480 US 421 (1987).
7. Mirisawo v. Holder, 599 F.3d 391, 392 (4th Cir. 2010).
8. R. v Secretary of State for the Home Department Ex p. Ahmad (Gulzar) (CA) Court of Appeal c.1990, Imm. A.R. 61.
9. Al-Ghorbani v. Holder, 585 F.3d 980 (6th Cir. 2009).
10. R. v. Immigration Appeal Tribunal ex parte Shah; Islam v. Secretary of State for the Home Department, (1999) 2 AC 629.
11. Bolanos-Hernandez v. INS, 767 F 2d 1277 (9th Cir 1984).



Ցուցումներ

Լրացուցիչ մեդիա-նյութերը նախատեսված են Ձեզ հետաքրքրող նյութի մասին հավելյալ գիտելիքներ ստանալու համար: